ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ–«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԵՐԵՎԱՆ № 16 1994

ՔՆԱՐԻԿ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈԼՈՎԻ ԵՐԿՈՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

XVII—XVIII դարերի գեղարվեստական թարգմանական արձակը քիչ է ուսումնասիրված։ Դեռևս ի մի հավաքված և գնահատված չեն այն բոլոր հուշարձանները, որոնք շրջանառության մեջ դրվելով, բավարարել են ժամանակի ընթերցողի գեղարվեստական պահանջմունքները։ Դրանց մի մասը ձեռագիր վիճակում է և սպասում է իր ուսումնասիրողին, իսկ մի մասն էլ թեպետ ժամանակին տպագրվել է, սակայն տարբեր պատճառներով անուշադրության է մատնվել և լավագույն դեպքում հիշատակվել ցանկերում կամ նշվել այս կամ այն թարգմանչի գրական ժառանգության ժամանակագրությունը կազմելիս։ Այնպես որ, այն թարգմանական երկերը, որոնք պահպանվել են հնատիպ հրատարակություններում, մեծ մասամբ հայտնի են միայն իրենց վերնագրերով։ Նրանց կցված հիշատակարանները շատ հաճախ՝ բացի թարգմանչի անունից և թարգմանության թվականից (երբեմն բացակայում են նաև սրանք) այլ տեղեկություններ չեն պարունակում։ Ուսումնասիրողը փաստորեն ձեռքի տակ ունի հնատիպ թարգմանական երկերի մի ստվար ցուցակ, որի ինչ լինելը՝ անհայտ է։ Այդ ցուցակում քիչ տեղ չեն գրավում նաև այն երկերը, որոնք որակվել են որպես եկեղեցական, դավանաբանական և շրջանցվել։ Մինչդեռ հայտնի է, որ հին և միջնադարյան գեղարվեստական արձակի փոքրածավալ ժանրերը, հատկապես պատմողական արձակը, անսպառ աղբյուր է հանդիսացել քարոզգրքերի և նման ժողովածուների համար։ Եվ հաճախ հենց այդպիսի քարոզգրքերի շնորհիվ են պահպանվել և մեզ հասել հին շրջանի պատմողական արձակի բազմաթիվ նմուշներ։ Ուրեմն, XVII—XVIII դդ. թարգմանական արձակի մասին քիչ թե շատ ամբողջական պատկերացում կազմելու համար, բացի գեղարվեստական արձակին պատկանող ինքնուրույն երկերից, անհրաժեշտ է ընդգրկել և հետազոտել այն ողջ թարգմանական գրականությունը, որի բաղկացուցիչ մասն է կազմում հին և միջնադարյան գեղարվեստական արձակը։

XVII դարի երկրորդ կեսի հայ տպագրության երախտավոր Հովհաննես Հոլովը (մհ. 1691 թ.[1]) հեղինակ է մի քանի երկերի և բազմաթիվ թարգմանությունների, որոնք ունեցել են ավելի քան 15 հրատարակություններ։ Այդուհանդերձ Հոլովի կյանքն ու նրա թողած գրական ժառանգությունը չի արժանացել պատշաճ ուշադրության[2]։

---

1 *Տե՛ս* Ա. Ալպոյաճյան, *Պատմութիւն հայոց դպրոցի, հ. Ա, Գահիրե, 1946, էջ 418։*

2 *Հոլովի վաստակի ճիշտ գնահատման պակասը հայագիտության մեջ որոշ չափով լրացրել է Ռ. Իշխանյանը, որը նրա գործունեությունը և գրական ժառանգությունը քննել է կուլ-*

Հոլովի թարգմանությունների մասին հիմնականում խոսվել է ամենընդհանուր ձևով։ Ուսումնասիրողները բավարարվել են նրա թարգմանությունների, հեղինակային երկերի ցանկերի և ժամանակագրության ճշտմամբ[3]։ Հոլովի թարգմանությունների հետ առաջին ծանոթությունն իսկ ցույց է տալիս, որ նրանց շարքում կրոնականից զատ, կան նաև այլ բնույթի գրքեր։ Այստեղ ներկայացվող երկու թարգմանություններից առաջինը 1671 թ. թարգմանված և 1675 թվականին Հռոմում հրատարակված «Նորագույն ծաղիկ զօրութեանց» երկն է[4], երկրորդը՝ Մարսելի հայկական տպարանում նույն 1675 թ. լույս տեսած «Ասացուածք խոհեմականք հնոց իմաստասիրաց» ժողովածուն[5]։ Այս երկուսն էլ պատկանում են «Բանք իմաստասիրաց» կոչված հին իմաստասերների ասույթների ժողովածուների շարքին։

Ասույթների ժողովածուները առաջ են եկել մ. թ. ա. VI—V դարերում, ապա անցել զարգացման երկարատև ուղի և հարատևել մինչև ուշ միջնադար։ Այդ ժողովածուների առաջացման և զարգացման գործում մեծ է եղել անտիկ գրականության ավանդը։ Հունական ասույթների ժողովածուները հիմք դարձան հին լատինական, ապա նաև քրիստոնեական ժողովածուների համար։

Իրենց զարգացման ընթացքում ասույթների ժողովածուները պարզորոշ սահմանազատվեցին և բաժանվեցին երկու թևի՝ արևելյան-հունական և արևմտյան-լատինական։ Արևելյան կամ հունական ժողովածուները, որոնք իրենց ծագումով ավելի վաղ շրջանի արդասիք են, ընդգրկում էին հին հույն իմաստասերների և հեղինակների ասույթները, և միայն երբեմն (ավելի ուշ շրջանի ժողովածուներում)՝ արևմտյան հեղինակների։ Իսկ արևմտյան՝ լատինական տիպի ժողովածուներում բացառապես ընդգրկվում են հանրահայտ արևմտյան բարոյախոս հեղինակները՝ Թոմա Ակվինացին, Օգոստինոսը, Սենեկան, ինչպես և այն հեղինակները, որոնց ընդունում էին թե՛ արևմուտքում, թե՛ արևելքում[6]։ Ահա ասույթների այդ երկու թևերին պատկանող ժողովածուների օրինակ են Հովհաննես Հոլովի կողմից թարգմանված «Ասացուածք խոհեմականք»-ը և «Նորագույն ծաղիկ զօրութեանց»-ը։ Առաջի-

---

տուր-պատմական հայեցակետով։ Տե՛ս «Հայ գրքի պատմություն», «Հովհաննես Հոլովն իբրև 17-րդ դարի հայկական դրահրատարակչական նոմենդուն գործիչ», Երևան, 1977։

3 Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1893, էջ 269—270։ Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն հայ դպրոցի, հ. Ա, էջ 418—419։ Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, էջ 503—504։

4 Սրա անվանաթերթում կարդում ենք. «Նորագոյն ծաղիկ զօրութեանց թարգմանեցեալ ի Յոհաննիսէ վարդապետէ Կոստանդինուպոլսեցւոյ, ի զուարճութիւն հայկազունեաց, յամի ներմարմնութեան տեառն 1671, ընդ հեղեռասներորդում աւուր ամսեանն փետրվարի, ի Հռոմ, ի փառս մեծագոյնս Այ»։ Գիրքը հրատարակվել է երկու անգամ ևս՝ 1685 թ. Վենետիկում և 1724 թ. Կ. Պոլսում։

5 Տե՛ս «Գիրք վայելուչ և հարկաւոր հանուրց հայկազունեաց բարեսիրաց, յորում պարունակի ազիւսակ դրոց տարեկանաց։ Պարզատօմար մշտենջենական, համաձայնութիւն ամսոյն Աղարեայ ընդ Յունաց։ Ասացուածք խոհեմականք հնոց իմաստասիրաց և սկզբունք համարողականի արհեստի, Մարշիլիայ, տպ. սր. Էջմիածնի և ս. Սարգսի զօրավարին, 1675։

6 Ասույթների ժողովածուների մասին տե՛ս М. Н. Сперанский. Переводные сборники изречений в славяно-русской письменности. Исследования и тексты. Гл. I. История изречений и их собрания в старой классической и византийской литературе. М., 1904, с. 1—67.

նը ներկայացնում է արևելա-հունական ժողովածուների տիպը, երկրորդը՝ արևմտա-լատինականը։

«Նորագոյն ծաղկին», որքան մեզ հայտնի է, ոչ ոք չի անդրադարձել։ Գրքի անվանաթերթի հայերեն խորագրից հետո տպված է նրա լատիներեն անվանումը «Flos virtutum»։ Թարգմանության աղբյուրի մասին այլ տեղեկություններ չկան։ Եվ դա այն պարզ պատճառով, որ խոսքը մի երկի մասին է, որը շատ մեծ ճանաչում էր գտել կաթոլիկ բարոյախրատական գրականության մեջ։ «Flos virtutum»-ը իրենից ներկայացնում է ասույթների և նրանց կցված exemplum»-ների բարոյախրատական զրույցների ժողովածու։ Այն ստեղծվել էր հյուսիսային Իտալիայում, ըստ երևույթին՝ Վենետիկում։ Պահպանվել են այդ երկի XIV դ. իտալերեն ձեռագրեր (Բոլոնիայից), որոնց խորագիրն է «Fiori di virti»։ Գրքի կազմողներն են Կերուբինո դա Ապոլեոն, Ջիովանի Անտոնիոն և Տոմազեո Լեոնին։ Այն պատկանում է հնագույն իտալական հրատարակությունների թվին։ Մինչև 1500 թ. արդեն հայտնի են եղել այդ գրքի 26 հրատարակություններ։ Ժողովածուն ունեցել է երկու խմբագրություն. մեկը պարունակում է 35 գլուխ, երկրորդը՝ 41։ Համառոտ խմբագրությունից է առաջացել ռուսերեն թարգմանությունը[7]։ Այդ խմբագրությունը տարածված է եղել Արևելքում, որի վկայությունն են նոր հունարեն, ռուսերեն և ռումիներեն թարգմանությունները։ Հայերեն թարգմանության համար հիմք է ծառայել Արևմուտքում տարածված և 41 գլուխ պարունակող ընդարձակ խմբագրությունը։ Չնայած գրքի հայերեն օրինակի ցանկում նշված է 40 գլուխ, իրականում նրանց քանակը 41 է, որովհետև առաջին հատվածը՝ «Յաղագս սիրոյ հասարակաբար» չի համարակալված։ Որպես «Գլուխ Առաջին» ներկայացված է հաջորդ՝ «Յաղագս սիրոյն Այ» հատվածը։

Գիրքը սկսվում է թարգմանչի՝ Հովհաննես Հոլովի առաջաբաններով. 1. «Բան առ սուրբն Գրիգոր Լուսաւորիչն Հայաստանեայց» (էջ 5—6) և 2. «Տրակ առ ընթերցողս» (էջ 7—9)։

Առաջին առաջաբանը գրված է միջնադարյան ավանդական առաջաբանների ոճով, որոնցում գրիչը կամ հեղինակը աղոթքով և պաղատանքով դիմում է սրբին, նայել «քաղցրութեամբ յանօգուտ ծառայ քո, և հաճեա վերընդունել ի ձեռանէ իմմէ զդուղնաբեայ զայս աշխատութիւնս»։ Երկրորդ առաջաբանից հայտնի է դառնում, որ Հովհաննես Հոլովը այդ թարգմանությունը կատարել է Նասիպի Գրիգորյանի խնդրանքով։

«Նորագոյն ծաղիկ»-ը ամբողջությամբ կազմված է հեթանոս ու քրիստոնյա հեղինակների ասույթներից։ Այն իր կառուցվածքով և մտահղացմամբ տարբերվում է արևելյան-հունական ժողովածուներից[8]։

Նրա կառուցվածքում հետևողականորեն կիրառված է անտիթեզի սկզբունքը, ըստ որի յուրաքանչյուր երկու գլուխ երկու հակադիր թեմաներ են. ուրախություն-տրտմություն, խաղաղություն-բարկություն, ողորմություն-խստասրտություն և այլն։ Բացառություն են կազմում առաջին 6 գլուխները, որոնք նվիրված են սիրո արտահայտության տարբեր ձևերին։ Այդ վեց

7 Նույն տեղում, էջ 561։

8 Այդ մասին տե՛ս Ք. Ս. Տեր-Դավթյան, «Բանք խմաստասիրաց»-ի մի նոր ժողովածու հայերեն թարգմանությամբ», ՊԲՀ, 1984, № 2։

գլուխներին հակադրված է 7-րդը՝ «Յաղագս զչարութեան կամ նախանձու»։ Ամենամեծ տեղը ասույթների հեղինակների շարքում գրավում են Սողոմոնը, Պղատոնը, Սենեկան, Արիստոտելը, Սոկրատը, Օգոստինոսը, Թովմա Ակվինացին, ապա նրանց հաջորդում են Թուլիոսը, Օվիդիոսը, Մակրոբիոսը, Իսիդորոսը, Կատոնը, Բոեցիոսը, Աղեքսանդրոսը, Գալիադորոսը, Վարոնը, Հերոնիմոսը, Դիոգենեսը, Պիթագորասը, Եզոպոսը և այլք։

«Նորագոյն ծաղիկ»ը տարբերվում է արևելյան թևին պատկանող ժողովածուներից նաև նյութի մատուցման տեսակետից։ Վերջիններում պարունակած ողջ նյութը կրում է աֆորիստիկ բնույթ։ Այս կամ այն իմաստասերի ասույթին հաջորդում է նրա իմաստը բացահայտող նույնքան սեղմ պատկերավոր առակ կամ անեկդոտատիպ պատմություն։ Ավելի ուշ շրջանի ժողովածուներում սրանց կցվում է նաև բարոյախոսություն։ «Ծաղիկ»-ը ընդգրկում է քրիստոնեական, աստվածաշնչային պատվիրաններին մոտ թեմաները։ Յուրաքանչյուր գլուխ, որպես կանոն, սկսվում է համապատասխան թեմային վերաբերող քրիստոնեական բարոյախոսության դրույթների պարզաբանությամբ։ Որպես մեծագույն հեղինակություններ վկայակոչվում են Արևմուտքի ճանաչված հեղինակները և աստվածաբանները՝ Օգոստինոս, Թովմա Ակվինացի, մարգարեներ, առաքյալներ։ Ապա նրանց դրույթները ամրապնդվում են մի շարք հունական կամ հռոմեական իմաստասերների, պատմիչների, բանաստեղծների ասույթներով։ Յուրաքանչյուր գլուխ պարտադիր ավարտվում է նշված դատողությունները ցուցադրող զրույցներով՝ վերցված կամ միջնադարյան հանրագիտարաններից կամ զրուցատիպ ժողովածուներից։ Բոլոր զրույցները անխտիր սկսվում են նրանց հեղինակների կամ աղբյուրների հիշատակումով։ Այդ աղբյուրների շարքում են Եզովպոսը, Հնագույն պատմությունը, Տրոյական պատմությունը, Աստվածաշունչը, Հարանց վարքը, Գիրք մոլութեանցը, Գործք Հռոմայեցվոցը, հիշատակվում է նաև պարզապես պատմությունը։ Դրանց մեջ ամենամեծ տեղը գրավում են «Գործք Հռոմայեցվոցի» զրույցները։ Շատ հավանական է, որ որոշ զրույցներ, որոնց սկսվածքներում հիշատակված են այլ աղբյուրներ, նույնպես քաղված լինեն «Գործք» կամ «Պատմութիւն Հռոմայեցվոց»-ից։ «Գործք»-ը, որն ամենայն հավանականությամբ, ստեղվել է XIII դարում Անգլիայում[9], ըստ մասնագետների, Աստվածաշնչից, Բարոյախոսից և «Հազար և մեկ գիշերից» հետո եղել է Եվրոպայի ամենամեծ ճանաչում գտած զրույցների ժողովածուն[10]։ Աշխարհիկ բնույթի այդ միջնադարյան ժողովածուում ամփոփված են առակներ, նորավեպեր, անեկդոտներ և ամբողջ վեպեր, որոնք ծագում են արևելյան, անտիկ և միջնադարյան եվրոպական գրականություններից։ Ժողովածուն չի թարգմանվել հայերեն, սակայն նրա բազմաթիվ զրույցներ ուղղակիորեն կամ միջնորդաբար այլ ժողովածուների կազմում, մտել են հայ մատենագրություն XIV—XVIII դարերի ընթացքում։

«Նորագոյն ծաղկի» թարգմանությամբ հայ մատենագրությունը հարստացավ հին իմաստասերների մինչ այդ անծանոթ արևմտա-լատինական թևի ժողովածուով։ Նրա արժեքը հայ մատենագրության համար հատկապես

---

[9] Տե՛ս Gesta Romanorum. Geschichten von den römern. Ein Erzählbuch des Mittelalters erstmalig herausgegeben von Winfried Trilitsch. Leipzig, 1979, s. 6—7.

[10] *С. В. Полякова*, Из истории средневековой латинской новеллы XIII в. В кн.: Средневековые латинские новеллы XIII в., Л., 1980, стр. 341.

մեծանում է եվրոպական միջնադարյան ժողովածուներից քաղված զրույցների առկայությամբ, որով հայ մատենագրություն է ներմուծվում միջնադարյան Եվրոպայում շրջանառության մեջ եղած զրույցների մի զգալի մաս։ Ժամանակին Ն. Մառը նկատել է, որ արևմտաեվրոպական հեքիաթները, իմա՝ զրույցները, «որոշակի ազդեցություն են ունեցել մեր ժողովածուների վրա» և բազմիցս նշել է «բարոյախոսական և հետաքրքրաշարժ ժողովածուների ուսումնասիրության անհրաժեշտությունը»[11]։ Ահա նաև այդ տեսակետից «Նորագոյն ծաղկի» և նմանատիպ ժողովածուների ուսումնասիրությունը պետք է լինի այդ հարցերով զբաղվողների ուշադրության կենտրոնում։

Դեռևս իտալացի հայագետ է. Տեզան հնում թարգմանված «Բանք իմաստասիրաց պիտանի ամենայն մարդոյ»[12] երկի կապակցությամբ անդրադարձել է նաև «Ասացուածք խոհեմականք»-ին և ցույց տվել, որ այդ երկու ժողովածուները («Բանք»-ը և «Ասացուածք»-ը) նույն երկի տարբեր թարգմանություններն են[13]։ Երկրորդի թարգմանիչը, ըստ Տեզայի, Ոսկան Երևանցին է[14]։

«Բանք»-ի հրատարակիչները՝ վենետիկյան մխիթարյանները շտեղում են, որ իրենց հրատարակածը Հովհաննես Ստոբեոսի գրքի կամ նրա համառոտության թարգմանությունն է, վերջինիս, սակայն, համարելով II դարի հեղինակ («Անտոնեանց ժամանակի յոյն մատենագիր, Քրիստոսէ գրեթէ 150 տարի առաջ»)[15]։ Իսկ թարգմանությունը «թէ յոճոյն ու թարգմանութեան ընտրութիւնէն՝ յայտնապէս կը տեսնուի, որ մեր երանելի թարգմանչաց միոյն երկասիրութիւնն է, կարդալ ի խրատ և յուսումն մանկութեան»[16]։ Տեզայի կարծիքով, «ստուգապէս չի կրնար ըսուիլ թէ Ստոբեոսի հետևած ըլլան. թեպետև հաւանական է ենթադրել, թէ այդ հռչակեալ գրքէն քաղած են իրենց ծաղկաքաղը»[17]։ Ըստ առավել ընդունված կարծիքի, Ստոբեոսը VI դարի առաջին տասնամյակների բյուզանդական հեղինակ է, որն իր մեծածավալ երկի մեջ ամփոփեց անտիկ և հռոմեական շրջանների ասույթների ժողովածուներից հասած ժառանգությունը։ Ուրեմն, հայերեն թարգմանությունը, եթե այն Ստոբեոսի երկի համառոտությունն է, չի կարող կատարված լինել VI դարից վաղ։

Ինչևէ, «Բանք»-ը լայն տարածում է գտել հայ միջնադարյան գրականության մեջ։ Նրանում ամփոփված իմաստասիրների ասույթներով, թևավոր խոսքերով և հակիրճ պատկերավոր առակներով դարեր շարունակ սնվել են մեր բարոյախրատական և կրթական ձեռնարկները, քարոզգրքերը, զրույցները և այլ ժողովածուները, հարստացնելով և ավելի պատկերավոր դարձնելով հայոց լեզուն։ Պահպանվել են «Բանք»-ի բազմաթիվ ընդօրինակություններ։

«Ասացուածք»-ը հրատարակվել է մի փոքրադիր ժողովածուի կազմում,

---

11 Ն. Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Ա, Պետերբուրգ, 1894, էջ 267։

12 Տե՛ս «Սոփերք հայկականք», հ. Ա, Վենետիկ, 1853, էջ 9—59։

13 Տե՛ս Է. Տեզա, Հելլեն իմաստասիրաց հատընտիր խրատք, թարգմանեալք ի հայ, «Բազմավէպ», 1894, էջ 132։

14 Նույն տեղում։

15 «Բազմավէպ», 1853, էջ 252։

16 Նույն տեղում։

17 «Բազմավէպ», 1894, էջ 73։

որի անվանումն է «Գիրք վայելուչ և հարկաւոր»։ Գրքի անվանաթերթում հիշատակված են չորս երկեր, որոնք պետք է պարփակված լինեին նշված ժողովածուում. 1. Աղիւսակ գրոց տարեկանաց։ 2. Պարզատօմար մշտնջենական, համաձայնութիւն ամսոցն Աղարեայ ընդ յունաց։ 3. Ասացուածք խոհեմականք հնոց իմաստասիրաց։ 4. Սկզբունք համարողական արհեստի։

Անվանաթերթում նշված այս չորս երկերից գրքում ներկայացված են երեքը (առաջինը՝ 7 էջ, երկրորդը՝ 72, երրորդը՝ 74)։ Իսկ չորրորդի («Սկզբունք համարողական արհեստի») փոխարեն «Ասացուածք»-ից անմիջապես հետո (որն ավարտվում է «Թէոդորոս ասէ, ամենայն կատարեալ շինուած սկիզբն է աւերման»—էջ 125) առանց վերնագրի տեղադրված են 9 զրույց (125—143 էջերում)։ Զրույցներին հաջորդում է հետևյալ հիշատակարանը (էջ 145). «Աւարտեցաւ գրդուկս շահաւէտ և օգտակար տպագրեցեալ ի պէտս և ի հրճուանս հայկազունեաց և մանաւանդ վաճառականաց։ Արդ՝ որք վայելէք զսա առողջութեամբ և խնդութեամբ ի փառս Քրիստոսի յիշեցէք զպատճառս զմատակարարս և զաշխատողս ի սմին, և մանաւանդ զհանգուցեալն ի Քրիստոս զՈսկան վարդապետ, ընդ որս և դուք յիշեցեալ լիջիք ի նոյնոյ տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. Ամէն»։

Ասենք, որ «Գիրք վայելուչ»-ում զետեղված զրույցները դիտվել են որպես «Ասացուածք խոհեմականք»-ի շարունակություն։ Անվանաթերթում հիշատակված «Սկզբունք համարողական արհեստի» բացակայությունը գրքում Ռ. Իշխանյանը բացատրում է նրանով, որ տպագրիչները չեն ցանկացել խախտել սահմանված ծավալը (145 էջ), որով հրատարակվել էին մի քանի այլ գրքեր ևս։ Եվ քանի որ «Սկզբունք»-ը իր ծավալով եղել է մյուս երեք մասերի չափ, դեռ մի քիչ էլ ավելի, այն չեն ընդգրկել ժողովածուի մեջ, այլ նույն 1675 թ. տպագրել են առանձին գրքով[18]։ Այդ ենթադրությունը լիովին արդարացի է, միայն կարող է մի փոքր ճշտման։ «Ասացուածք»-ը ավարտվում է ոչ թե 143-րդ էջով, այլ 125-ով, այսինքն, այն նախատեսվածից 20 էջով պակաս էր։ Նշված ծավալը պահպանելու համար տպագրիչները դատարկ 19 էջերը լրացրել են 9 զրույցներով։

Արդ, որտեղից են այս զրույցները հայտնվել «Ասացուածք խոհեմականք» թարգմանական հուշարձանի հավելվածում։ Պարզվում է, որ նրանք քաղված են «Նորագոյն ծաղիկ զօրութեանց» գրքից։ Երկու ժողովածուների համապատասխան զրույցների համեմատությունը ցույց տվեց նրանց լիակատար նույնությունը։

Ստորև բերում ենք «Գիրք վայելուչ»-ում «Ասացուածք»-ից հետո տեղադրված զրույցների ցանկը սկզբնատողերով՝ բաղդատելով այդ պատմությունները «Նորագոյն ծաղիկ» գրքում եղած համապատասխան զրույցների հետ[19]։

---

18 Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 515—516։

19 Այս ինը զրույցներից երկուսը («Ընթեռնում ընդ վարս հարանց սրբոց, թէ անապատական ոմն...», «Ընթեռնում ի պատմութիւնս հռոմայեցւոց, թէ Փարաղնեայ դուստր Անաստասի՝ գոլով սիրահարեցեալ...») զետեղվել են նաև «Հայելի վարուց»-ի հրատարակության մեջ՝ «Վերջ» բառից հետո (տե՛ս Գիրք Հայելի վարուց, որ ասի Հարանց վարք. տպագրեցեալ ի հայրապետութեան տեառն Սահակի Հայոց կաթողիկոսի. ի թվին Քրիստոսի 1702, իսկ ըստ Հայոց ՌՃԾԱ..., էջ 331—333, էջ 333—334)։ Այս երեք ժողովածուների համապատասխան զրույցների համեմատությունը ցույց տվեց մանր գրչական տարբերություններ մի կողմից «Հայելի վարուց»-ի և «Գիրք վայելուչ»-ի, մյուս կողմից՝ «Նորագոյն ծաղիկ»-ի միջև։ Հետե-

«Գիրք վայելուչ»-ի զրույցներ

1. Ընթեռնումք ըն վարս հարցն սրբոց, թէ անապատական ոմն ճգնութեամբ մեծաւ աղաչէր... (էջ 125—128)

2. Ընթեռնումք ի վարս հարցն սրբոց, սատանայն խորհեցաւ յաւուր միում ամուսնանալ... (էջ 128—129)

3. Ընթեռնումք ըն պատմութիւնս հռոմայեցւոց, թէ զոլով գերեցեալ Մարբոպիոս ոսկողեան... (էջ 130)

4. Ընթեռնումք ըն գիրս սատուածաշունչս, թէ ծերք երկու տուիցեալք ունեմն մանկուհւոյն Շունչան, կոչեցելոյ...» (էջ 130—132)

5. Ընթեռնումք ըն վարս հարցն սրբոց, թէ այր ոմն մեծազգի և ազնուական թողեալ զաշխարհ... (էջ 132—135)

6. Ընթեռնումք ըն պատմութիւնս հռոմայեցւոց, թէ Փարաղնեայ դուստր Անաստասի կայսեր զոլով սիրահարեցեալ... (էջ 135—136)

7. Ընթեռնումք ըն պատմութիւնս հռոմայեցւոց, թէ արքայն Դիոնեսիոս զոլով երկչոտագոյն... (էջ 137—138)

8. Ընթեռնումք ըն վարս հարցն սրբոց, թէ աւազակ ոմն զկնի գործելոյ զրնաւս տեսակս չարութեան... (էջ 138—140)

9. Ընթեռնումք ըն պատմութիւնս հռոմայեցւոց, թէ կայսր ոմն մինչ անցանէր ընդ անտառ իմն, նստս փիլիսոփայ ոմն նստեալ անդ... (էջ 141—143)։

«Ներագոյն ծաղիկ»

Ընթեռնումք ըն վարս հարցն սրբոց, թէ անապատական ոմն ճգնութեամբ մեծաւ աղաչէր... (էջ 134—137)

Ընթեռնումք ի վարս հարցն սրբոց, սատանայն խորհեցաւ յաւուր միում ամուսնանալ... (էջ 142—143)

Ընթեռնումք ըն պատմութիւնս հռոմայեցւոց, թէ զոլով գերեցեալ Մարբոպիոս ոսկողեան... (էջ 146)

Ընթեռնումք ըն գիրսատուածաշունչս, թէ ծերք երկու տուիցեալք մանկուհւոյ ունեմն Շուշան կոչեցելոյ... (էջ 153—155)

Ընթեռնումք ըն վարս հարցն սրբոց, թէ այր ոմն մեծազգի և ազնուական թողեալ զաշխարհ... (էջ 157—160)

Ընթեռնումք ըն պատմութիւնս հռոմայեցւոց, Փարաղնեայ դուստր Անաստասի կայսեր զոլով սիրահարեցեալ... (էջ 164—166)

Ընթեռնումք ըն պատմութիւնս հռոմայեցւոց, թէարքայն Դիոնեսիոս զոլով երկչոտագոյն... (էջ 172—175)

Ընթեռնումք ըն վարս հարցն սրբոց, թէ աւազակ ոմն զկնի գործելոյ զրնաւս տեսակս չարութեան... (էջ 187—190)

Ընթեռնումք ըն պատմութիւնս հռոմայեցւոց, թէ կայսր ոմն մինչ անցանէր ընդ անտառ իմն, նստս փիլիսոփայ ոմն նստեալ անդ... (էջ 120—124)։

Ամենայն հավանականությամբ, այդ 9 զրույցները «Գիրք վայելուչ» ներմուծել է ինքը Հովհաննես Հոլովը, քանի որ այլ ոք այդ բանը արած լինել չէր կարող. «Ներագոյն ծաղիկն» ու «Գիրք վայելուչ»-ը տպագրվել էին միաժամանակ՝ 1675 թ., մեկը՝ Հռոմում, մյուսը՝ Մարսելում։ Եվ պարզ է, որ «Գիրք վայելուչ»-ում զետեղված զրույցները լինելով Հովհաննես Հոլովի թարգմանություն, այդ կարճ ժամանակամիջոցում չէին կարող անցնել ուրիշի ձեռք։

Ռ. Իշխանյանը ենթադրաբար արտահայտել է այն միտքը, որ «Գիրք վայելուչ»-ի բոլոր երեք մասերը կամ գոնե նրա երրորդ մասը կազմել է (ուստի և թարգմանել) Հովհաննես Հոլովը։ Նա զրույցները ընկալել է որպես «Ասացուածք»-ի շարունակություն և դրանք չի անջատել իրարից։ Իր վերոհիշյալ ենթադրության համար, որ «Ասացուածք»-ը Հովհաննես Հոլովի թարգմանությունն է, կռվան է ծառայել հենց նշված զրույցների, որոնք

վարար, հիշյալ զրույցները «Հայելի վարուց»-ի հրատարակություն են անցել ոչ թե անմիջապես «Ներագոյն ծաղիկ»-ից, այլ «Գիրք վայելուչ»-ից։

չեն մտնում «Ասացուածք»-ի կազմի մեջ, «ըն» լատինարան նախդրի գործածությունը («ընթեռնումք ըն գիրս», «ըն պատմութիւնս» և այլն), որը բանասիրության մեջ հատկապես բնորոշ է համարվել Հովհաննես Հոլովի գրավոր խոսքին»[20]։

Եթե զրույցների հարցը լրիվ պարզաբանված է, ապա «Ասացուածք»-ի թարգմանության վերաբերյալ կարելի է միայն ենթադրություններ անել։ Բացառված չէ, որ «Ասացուածք»-ի թարգմանիչը նույնպես Հովհաննես Հոլովն է, որը ասույթների հանդեպ նախասիրություն էր ցուցաբերել և արդեն այդ կարգի թարգմանության փորձ ուներ։ Հիշատակարանից զգացվում է, որ «Գիրք վայելուչ»-ը նվիրվել է Ոսկան Երևանցու հիշատակին, որին պատկանել է այդպիսի մի գրքի հրատարակության գաղափարն ու նախաձեռնությունը («զպատճառս, զմատակարարս և զաշխատողս ի սմին, և մանաւանդ զհանգուցեալն ի Քրիստոս զՈսկան վարդապետն...»)։ Ոսկան Երևանցուն հարգանքի տուրքն է մատուցել իր մասնակցությամբ նաև Հովհաննես Հոլովը, զետեղելով այդ գրքում իր թարգմանությունները և շարունակելով Մարսելի տպարանի հայ տպագրության ղեկավարման աշխատանքները։

К. С. ТЕР-ДАВТЯН

О ДВУХ ПЕРЕВОДАХ ОВАНЕСА ОЛОВА

Резюме

Армянская переводная литература XVII века богата произведениями средневековой художественной прозы. В 1675 г. в Риме и Марселе были изданы переведенные с латинского «Цветы дарований» и «Мудрые изречения».

В статье выявляется и определяется характер этих сборников: первый из них принадлежит к западно-латинскому, второй—к восточно-греческому типу сборников изречений мудрецов.

Показано, что 9 новелл, помещенных непосредственно сразу после «Мудрых изречений», не входят в состав последних. Они внесены в сборник из книги «Цветы дарований», по всей видимости, самим переводчиком «Цветов» Ованесом Оловом. Автор статьи склоняется к мнению, что и «Мудрые изречения» переведены Ованесом Оловом.

K. S. TER-DAVTIAN

DE DEUX TRADUCTIONS DE HOVHANNES OLOV

Résumé

La littérature arménienne de traduction du XVIIe siècle est riche en oeuvres médiévales en prose. En 1675, deux oeuvres traduites du latin—„Flos Virtutum“ et „Apophegmata“—furent publiées à Rome et à Marseille.

20 Նույն տեղում, էջ 516. այդ մասին տե՛ս նաև «Հանդէս ամսօրեայ», 1893, էջ 376։

L'article éclaircit et précise le caractère de ces recueils: le premier appartient au type occidental latin, le second au type oriental grec de recueils de préceptes.

Il montre que les neuf nouvelles qu'on trouve immédiatement après les „Apophegmata" n'en font pas partie. Elles ont été empruntées au livre „Flos Virtutum", probablement par leur traducteur même, c'est-à-dire Hovhannès Olov.

L'auteur de l'article est enclin à penser que le recueil „Apophegmata" fut également traduit par Hovhannès Olov.